https://doi.org/10.26069/greynet-2025-000.902-gn

Գորշ գրականության ռեսուրսների զարգացման ռազմավարության մասին Պիզայի հռչակագիրը

Ներածություն

Գիտելիքների և տեղեկության անընդհատ աճող ծավալը, որն արտադրվում է գիտական, վարչական և արտադրական կազմակերպությունների կողմից բոլոր առարկայական և մասնագիտական ոլորտներում, չի վերահսկվում առևտրային հրատարակչությունների կողմից: Տեղեկության նման կարգի աղբյուրները, որոնք հայտնի են որպես գորշ գրականություն, իրենից ներկայացնում են հաղորդակցության էական ռեսուրս՝ գիտության և բարձրագույն դպրոցի, հետազոտությունների և մշակումների, զարգացման ռազմավարությունների ստեղծման ոլորտներում, ինչպես մասնագիտական ընկերակցություններում, այնպես էլ քաղաքացիական հասարակության մեջ ընդհանրապես: Գորշ գրականությունը ճանաչված է որպես փորձառական տվյալների, գիտական փաստարկների, նորարական գիտելիքների կարևոր աղբյուր՝ մարդկային գործունեության բազմաթիվ ոլորտներում, ներառյալ գիտությունը, ճարտարագիտական նախագծումը, առողջապահությունը, կրթությունը, մշակույթը և արվեստը:

Գորշ գրականության փաստաթղթերի տիպերին, որոնք գոյություն ունեն տպագիր կամ էլեկտրոնային տեսքով, վերաբերում են գիտա-տեխնիկական հաշվետվությունները, ծանոթագրությունները, ակնարկները, գրախոսությունները, աշխատանքային նյութերը, գիտաժողովների աշխատությունները, գիտական թեզերը, բազմամիջավայր բովանդակությունը, որոնք պարունակում են արժեքավոր գիտական տեղեկություն:

Որպեսզի լավագույնս իրագործվեն գիտական հետազոտությունների արդյունքները և գիտա-տեխնիկական տեղեությունը տարածվի գործածողների ամենալայն շրջանակում, Մենք, ներկա հռչակագիրը ստորագրողներս, կոչ ենք անում ճանաչել գորշ գրականության աճող դերը և նրա առանձնահատուկ կարևորությունը՝ որպեսզի ապահովվի ազատ մատչում հետազոտությունների արդյունքներին, գիտության բաց զարգացմանը, նորարական գործունեությանը, կշռադատված և հիմնավորված քաղաքականությանը և գիտելիքների տարածմանը:

Տեղական, ազգային և համաշխարհային մասշտաբներով գորշ գրականության առավելությունների առավել լիակատար օգտագործման համար հռչակվում է հետևյալ գործողությունների անհրաժեշտությունն ու աջակցումը:

https://doi.org/10.26069/greynet-2025-000.902-gn

Գորշ գրականության ռեսուրսների զարգացման ռազմավարության մասին Պիզայի հռչակագիրը

Կազմակերպչական ոլորտում.

1. Կառավարական և այլ կազմակերպություններին՝ ավելի մեծ ուշադրություն դարձնել բաց մատչելիության խնդիրներին։
2. Այն կազմակերպություններին, որոնք կապված են գորշ գրականության արտադրման, օգտագործման, հավաքման և վերահսկման հետ, զարգացնել համագործակցությունը և գործողությունների համակարգումը։
3. Գորշ գրականության մետատվյալների համար օգտագործել միանշանակ ցուցիչներ և բաց չափօրինակներ։

Գիտական հետազոտությունների և կրթության ոլորտում.

4. Ներդնել գորշ գրականության այն փաստաթղթերի բարձր որակի ճանաչման և խրախուսման նոր ձևեր, որոնք թողարկվում են համալսարանների, կառավարական հաստատությունների և այլ ինստիտուտների կողմից։
5. Կատարելագործել գորշ գրականության արտադրման և մատենագիտական վերահսկման չափօրինակները։
6. Մշակել և ներդնել գորշ գրականության վարչարարության համատեղելի չափօրինակներ։
7. Ստեղծել ուղեցույցներ՝ գորշ գրականության արտադրման, տարածման և գնահատման դրական օրինակներով։

Իրավական ոլորտում

8. Մտցնել փոփոխություններ պարտադիր օրինակի և հեղինակային իրավունքի օրենսդրության մեջ, որոնք թույլ կտային ընդլայնել գորշ գրականության ռեսուրսների ձևավորման համար գրադարանների, հավաքման ծառայությունների, կրթական հաստատությունների և ծրագրերի հնարավորությունները և այդ ռեսուրսներին մատչումը, հատկապես ոչ-առևտրային նյութերի մասով, որոնք ներկայացնում են հասարակական հետաքրքրություն։
9. Բացահայտել գորշ գրականության տարածման ճանապարհին ընկած իրավաբանական բնույթի խոչընդոտները։

https://doi.org/10.26069/greynet-2025-000.902-gn

10. Զարգացնել գորշ բովանդակության արտոնագրումը ինչպես առևտրային, այնպես էլ ոչ-առևտրային նպատակներով[i]:

Ֆինանսների և կայուն զարգացման ոլորտում.

11. Որոշել այն հետազոտությունների ֆինանսավորման մատչելի աղբյուրները, որոնք ներառում են գորշ գրականությունը:
12. Ավելացնել գորշ գրականության ֆոնդերի ձևավորման և մշտական պահպանության ֆինանսական աջակցությունը:
13. Ավելացնել ներդրումները տպագիր և թվային գորշ գրականության մատչման ինֆրակառուցվածքի և նոր տեխնոլոգիաների մեջ:

Տեխնիկական ուղղությամբ.

14. Զարգացնել հղումների հնացմանը հակազդելու եղանակներ, մեծացնել առցանց բովանդակության կայունությունը և մատչելիությունը:
15. Մշակել գորշ գրականության հրատարակությունների մատակարարման համակարգեր և միջոցներ՝ համապատասխան տվյալների զանգվածների և այլ ոչ-տեքստային բովանդակության վրա տրվող ակտիվ հղումներով, դրանց հետ միասին նաև փոխգործարկելի չափորինակներ, գորշ գրականությունը համատեղ օգտագործելու նպատակով:

---

[i] ¡ Pisa Declaration on Policy Development for Grey Literature Resources. May 16, 2014.
Translated
Into Russian by L. Pavlov
Into Armenian by Kh. Grigoryan, Ankyunacar Print & Electronic Publishing Nov 13 2015